

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՀՈՐԵՃՆԱԲԹԻ, 22 ՄԱՅԻՍԻ 2019Թ.
№ 11 (501)

Այս նահապետության առաջին (նահապետի) անունը Սիսակ էր: Իսկ սրանց սերնդից ընտրելով մի շատ քաջ, գեղեցիկ ու քաղցրաբարո մարդու՝ Եռան(Առան) անունով, նահապետ է կարգում Առանա մեծ դաշտի վրա...

Ստեփանոս Օրբելյան
«Սյունիքի պատմություն»



Առեղծված. 2019թ 1-ին եռամսյակի 1000 խոշոր հարկ վճարողների ցանկից բացակայում էր Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը

2019թ 1-ին եռամսյակի 1000 խոշոր հարկ վճարողների ցանկից բացակայում էր Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը, որը նախորդ տարի վճարել է 41 մլրդ դրամ որպես 2-րդ խոշոր հարկ վճարող:
Հատկանշական է, որ ընկերությունն այս տարի եւս ունի գրանցված ավելի քան 4000 աշխատակից, եւ միայն աշխատակիցների եկամտային հարկը եռամսյակի համար գերազանցում է 1 մլրդ դրամը:
Առեղծված գարնանալի է, որ նման խոշոր

ընկերությունը 2019 թ. 1-ին եռամսյակում վճարել է ընդամենը մի քանի մլն դրամ հարկ կամ դա էլ չի վճարել:
ՊԵԿ-ից ակնկալում ենք համապարփակ պարզաբանում այս հարկային աճապարարության վերաբերյալ:
Մանե Թանդիլյանի ֆեյսբուքյան էջից 3.9.
Թերթը պատրաստ էր թողարկման, երբ ՊԵԿ-ը վերահրատարակեց 2019թ. 1-ին եռամսյակում հանրապետության 1000 խոշոր հարկատուների ցուցակը:
Ըստ վերահրատարակված ցուցակի՝ 2ՊՄԿ-ն դարձել է հանրապետության երրորդ խոշոր հարկատուն եւ նշված ժամանակամիջոցում պետությանը վճարել է 6.7 մլրդ դրամ հարկ (2018-ի 1-ին եռամսյակում վճարել էր 4.1 մլրդ դրամ, 2-րդ եռամսյակում՝ 20.5 մլրդ դրամ):
Եվ, այդուհանդերձ, առեղծվածը չի վերջանում:

Ելցիկի ու Նազարբաեի ժեղզվողակի կոմյունիկեն ու մարած նախաձեռնությունը
Ղարաբաղապատման և շփման գծում ռազմական գործողությունները դադարեցնելու եւ խաղաղ բնակչության շրջանում զոհերը կասեցնելու պայմաններ ստեղծելու համար փորձ էր արվում երկխոսություն ստեղծել կողմերի միջև: Այդ գործընթացին մասնակցում էին ու մինչեւ հիմա էլ մասնակցում են միջնորդ երկրներ:
Առաջին փորձերից մեկը 1991թ. ձեռնարկեցին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը եւ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեի ղեկավարությամբ ղոյություն ունեցող ԽՍՀՄ-ի շրջանակներում:
1991թ. սեպտեմբերին Ռուսաստանի եւ Ղազախստանի նախագահների գլխավորած միջնորդական առաքելությունն այցելեց Ստեփանակերտ, Երեւան եւ Բաքու: Այցի արդյունքներով սեպտեմբերի 23-ին ժեղզվողակում ստորագրվեց կոմյունիկեն, որով պետք է պայմաններ ստեղծվեին բանակցային գործընթաց սկսելու համար: Կոմյունիկեն նախեւառաջ բարի մտադրությունների հռչակագիր էր՝ առանց դրանց իրագործման որեւէ մեխանիզմի, ուստի նախագահների այցից հետո տարվող բանակցություններն ընդհատվում էին ռազմական գործողություններով եւ շուտով մտան փակուղի:
Հենց այդ ժամանակներից էլ առանցքային էր բանակցություններում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցության ու կարգավիճակի հարցը, որի շուրջ կողմերը հակասական դիրքորոշում ունեին: Արբեջանական կողմը դեմ էր Ղարաբաղի մասնակցությանը՝ թե՛ որպես առանձին պատվիրակություն, թե՛ որպես Հայաստանի

Սյունիքի մարզում մոտ հարյուր մարդ էր արձագանքել վարչապետի՝ դադարանների մուտքը շրջափակելու կոչին

2019թ. մայիսի 20-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նստավայրերը շրջափակվել էին:
«Սյունյաց Երկիր» թերթի ներկայացուցիչներն առավտովանից գտնվում էին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի եւ նրա տարածաշրջանային նստավայրերի մոտ:
Ժամը 9-ի դրությամբ Կապանում դատարանի մուտքի մոտ, հավաքվել էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պայմանագիր» կուսակցության մոտ քառասուն ակտիվիստ:
Դատավորները ժամը 9-ի դրությամբ չէին մտել դատարանի շենք:
Պարզ չէր նախապես նշանակված դատական նիստերը տեղի՞ կունենան, թե՞ ոչ:
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրի մոտ հավաքվածների թիվը ժամը 9-ի դրությամբ

հասնում էր մոտ երեք տասնյակի. նրանք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տեղական կառույցի ներկայացուցիչներ էին:
Այնտեղ էին «Իմ քայլը» դաշինքից Աժ պատգամավորներ Տիգրան Կարապետյանն ու Արմեն Խաչատրյանը:
Դատավոր Մուրադ Յոզվանյանը չէր մտել դատարանի շենք:
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մոտ տասը անդամ շրջափակել էին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Մեղրու նստավայրը:
Այնտեղ նույնպես աշխատողները չէին փորձել մտնել աշխատավայր:
Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի նստավայրի մոտ ժամը 9-ի դրությամբ հավաքվել էին մոտ երեսուն «Ք.Պ.» -ականներ:



Գերմանացիներն իրենց երկրում սա կհանդուրժեի՞ն

Բնապահպանության եւ ընդերքի տեսչության նախկին ղեկավար Արթուր Գրիգորյանը Գերմանիայում «Յայնրիխ Բյոլ» հիմնադրամում, Արծվանիկի պոչամբարի մասին պատմող տեսանյութ է ցուցադրել եւ գերմանացիներին խնդրել է պատասխանել՝ գերմանացիներն իրենց երկրում դա կհանդուրժեի՞ն: Յայաստանի հեղափոխությունից մեկ տարի անց գերմանական հիմնադրամն օրերս Բեռլինում հանդիպում էր կազմակերպել հայաստանյան քաղաքական գործիչների եւ ակտիվիստների հետ:



Գործող իշխանությունը պետք է հիմնավորի, որ այս գործունեությունը համապատասխանում է գերմանական չափանիշներին կամ պետք է բացատրի, թե ինչ է պատրաստվում անել, եթե չի համապատասխանում: Քանի որ արդեն երկար ժամանակ է, ինչ ստուգման արդյունքները հրապարակվել են, եւ, ըստ էության, չկա որեւէ մեսիջ կառավարության կողմից, որ նա պատրաստվում է ինչ-որ բան փոխել, կարելի է ենթադրել, որ նրանք համաձայն են, որ սա եվրոպական ստանդարտ է:

«Սա մետաղական հանքավայր է, որտեղ արդյունահանում են պղինձ և մոլիբդեն: Յիմա դուք տեսնում եք պոչամբար, որտեղ լցվում են հանքարդյունաբերական թափոնները, սրանք շատ վտանգավոր և թունավոր նյութեր են: Թափոնները եվրոպական ստանդարտների համաձայն լցվում են մեր գետերը: Կուզեի հասկանալ, թե որքան՞ է ձեր գնահատմամբ այդ գործունեությունը եվրոպական կամ գերմանական ստանդարտներին համապատասխան», - հարց է բարձրացրել Գրիգորյանը:

Տեսանյութում երևում է, որ Արծվանիկի պոչամբարի թափոններն ուժեղ հոսքով լցվում են Նորաշենիկ գետ. «Գերմանացիներն իրենց երկրում սա կհանդուրժեի՞ն»:

Քաջարանի հանքավայրը շահագործում է «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը, որի 60 տոկոսը պատկանում է գերմանական «Քրոնիմեն մայնիգ» հանքարդյունաբերական ընկերությանը:

«Չմոռանանք, որ վարչապետը նշել էր, որ Յայաստանում կարող է իրականացվել այնպիսի հանքարդյունաբերություն, որը կհամապատասխանի գերմանական եւ եվրոպական ստանդարտներին: Դուք ինք-

ներդ կգնահատեք:

Կոչ են անում՝ փորձեք ձեր կառավարությանը հասցնել, որ հարիր չէ, որ գերմանական մասնակցություն ունեցող ընկերությունն այսպես վարվի մեկ այլ երկրի՝ Յայաստանի բնության հետ: Եթե մեր կառավարությունը, մեր իշխանությունները պատրաստ չեն լուծել, ես չգիտեմ, թե ինչու չեն ուզում, չեն կարող, գուցե կոռուպցիոն խնդիրներ կան, չեն կարող ասել, բայց

խնդիրը չի լուծվում:

Երբ ես Բնապահպանության եւ ընդերքի տեսչության ղեկավար էի, մենք այնտեղ ստուգում ենք արել, ես չեմ կարող հիմա դրանց արդյունքները ներկայացնել, քանի որ դրանք համարվում են առետուրային գաղտնիք, բայց նշեմ, որ ստուգման վերջին օրը, երբ ես դեռ չէի հասցրել ամփոփել արդյունքները, առանց որեւէ բացատրության ազատվեցի աշխատանքից:

Սյունիքի մարզում մոտ հարյուր մարդ էր արձագանքել վարչապետի՝ դադարանների մուտքը շրջափակելու կոչին

12 Այդտեղ էր նաեւ «Իմ քայլը» դաշինքից Աժ պատգամավոր Կարեն Յամբարձումյանը:

Մենք հեռախոսագրույց ունեցանք Սիսիանի տարածաշրջանի դատավոր Իգնատ Բեգլարյանի հետ, ով չէր գտնվում դատարանի նստավայրի ներսում եւ մասնավորապես ասաց. «Ես չեմ պատրաստվում մեկնաբանել հանրապետության վարչապետի՝ դատարանները շրջափակելու կոչ-հորդորը, չեմ էլ փորձում մտնել դատարանի շենք, որը կարող է անհարկի կոնֆլիկտների տեղիք տալ, ի վերջո դա մեկ անձի դեմ ուղղված քայլ չէ...»:

Իգնատ Բեգլարյանի տեղեկացմամբ՝ Սիսիանում մայիսի 20-ին դատական նիստեր նշանակված չեն, եւ խոսք չի կարող լինել դատական նիստերի ծախողման կամ հետձգման մասին:

Բոլոր դատարանների շենքերի մոտ հերթապահում էին ոստիկանները, շտապ օգնության մեքենաները, ինչպես եւ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները:

Իրավիճակը խաղաղ ընթացքի մեջ էր, կոնֆլիկտներ չգրանցվեցին:

Դատարանները շրջափակողներից բացի դատարանների մերձակայքում հավաքվել էր թամաշա անողների փաղանգ՝ տեղ-տեղ համախմբված:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Մեղրու նստավայրի մուտքի մոտ հավաքվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տեղական կառույցի 10-15 անդամ:

Դատարանի մուտքը փակելու հետ մեկտեղ (թեեւ որեւէ մեկը չի էլ փորձում մուտք գործել դատարանի շենք) նրանք բարձրացնում են նաեւ դատական իշխանությանն առնչվող եւ իրենց մտահոգող հարցեր:



20 մայիսի 2019թ., Կապան



20 մայիսի 2019թ., Գորիս

Մասնավորապես՝ մեկ տարի շարունակ Մեղրիում դատավոր չկա, եւ ոչ մեկին, կարծեք, այդ խնդիրը չի մտահոգում:

Նախկին դատավորի պաշտոնավարման ժամանակ տասնյակ գործեր դատաքննության փուլ էին հասել, իսկ նրա հեռանալուց հետո այդ գործերի քննությունը մարզի այլ վայրերում սկսել է սկզբնական փուլից (նախնական դատական նիստերից), որոնց ավարտը, մեկ տարի հետո անգամ, չի երեւում, իսկ դատական լաբիրինթոսում հայտնված մարդկանց ճակատագրերն առնվազն Սյունիքի մարզում որեւէ մեկին չի հետաքրքրում:

Մայիսի 20-ի օրվա երկրորդ կեսին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատարանի տարածաշրջանային նստավայրերում (Գորիս, Սիսիան, Մեղրի) վերականգնվել է բնականոն աշխատանքը:

Ըստ տեղերից ստացվող տվյալների՝ Սյունիքի մարզում մոտ հարյուր մարդ էր արձագանքել վարչապետի՝ դատարանների մուտքը շրջափակելու կոչին:

Ստեղծված իրավիճակում, անշուշտ, դատավորներն ու դատարանի մյուս աշխատակիցները կարող էին մուտք գործել դատարանի շենքեր եւ աշխատել, սակայն նրանք ցուցաբերեցին զսպվածություն եւ տեղիք չտվեցին ավելորդ լարվածության:

Դատարանի մուտքերի մոտ հերթապահող ոստիկաններն ու իրավապահ մարմինների մյուս ներկայացուցիչներն ավելի քիչ չէին, քան քաղաքացիները:

Ի դեպ, դատարանի մուտքերը շրջափակողները գերազանցապես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներ կամ այդ քաղաքական ուժի համակիրներ էին:

Սիսիանում եւ Գորիսում դատարանի մուտքերը շրջափակող «Բ.Պ.»-ականների հետ էին Սյունիքի մարզից Աժ պատգամավորներ Արմեն Խաչատրյանը, Տիգրան Կարապետյանը եւ Կարեն Յամբարձումյանը:

«Սյունյաց երկիր»

Վերին Խորանանում Սուրբ Մովսես Տաթևացու ոգեկոչումն էր



Տեւական ընդմիջումից հետո երեք տարի է, ինչ ոգեկոչվում է հայոց 101-րդ կաթողիկոս, սուրբ Մովսես Խոտանանցու հիշատակը: Մայիսի 14-ին՝ մեծ հայորդու մահվան օրը, նրա ծննդավայրի՝ Վերին Խոտանան գյուղի սուրբ Աստվածածին եկեղեցուն (կառուցված՝ 17-րդ դարում) մատուցվեց սուրբ պատարագ՝ ի հիշատակ երանելի Մովսես


Խոտանանցու, նշվեց նրա հոգեշնորհ գործերը՝ ի բարօրության Հայ առաքելական եկեղեցու մաքրության եւ գոյատևման: Նա շրջում էր եւ քարոզում էր ժողովրդին, եկեղեցական կարգերը վերահաստատում, եկեղեցիներ նորոգում, դպրոցներ բացում: Եկեղեցական կյանքի զարթոնքը մեծ խանդավառության էր առաջ բերում հավատացյալների շրջանում

եւ մեծացնում Մովսես Տաթևացի վարդապետի համբավը: Մայր աթոռի համար սկսվում են վերազարթոնքի օրեր, նորոգվում են Մայր տաճարը, կիսաավեր շինությունները: Պատարագից հետո խոտանանցիները եւ համայնքի հյուրերը մասնակցեցին գյուղի վերին մասում տեղադրված մետաղալուռ խաչի օրհնման արարողությունը, որ կատարեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա

Չերոյանը: Խաչի տեղադրումը նախաձեռնել են Վահե Բաղայանը եւ Էդգար Մինասյանը: Արարողությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Յունան Պողոսյանը եւ Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը, Կապանի բնակավայրերի վարչական ղեկավարներ, հյուրեր:

Վահրամ Օրբելյան

Անորոշության ռիսկերը. հայացք Սյունիքից



Սեկ տարի առաջ Հայաստանի Հանրապետությունում իշխանափոխության բերած հայտնի իրադարձությունները մեր հայրենակիցների գերակշիռ մասի մեջ հույսեր արթնացրին, որ լճացման եւ ամենաթողության ժամանակներին փոխարինելու է գալիս ազնվության, ինտելեկտի, աշխատասիրության, հոգեւոր եւ բարոյական բարձր արժեքների ժամանակաշրջանը: Թե ինչքանով էին հիմնավոր այդ հույսերը, քննարկման առանձին ու ծավալուն թեմա է, բայց ակնհայտ է, որ դրանք հիմնականում պայմանավորված էին Նիկոլ Փաշինյան չհամոզվող մարտիկի կերպարով եւ, ըստ իս, ավելի շատ կրում էին հուզական բնույթ, ինչը բնորոշ է հեղափոխական իրավիճակներին: Ժողովուրդը հավատաց Նիկոլ Փաշինյանին, ի սրտե ընդունեց նրա «Սերժիր

Սերժին» կարգախոսը եւ իշխանափոխություն իրականացրեց: Սակայն համատարած հուզականության պայմաններում չհստակեցվեց մի կարեւոր հարց. մերժելով նախկին եւ իրապես անընդունելի իրավիճակը՝ ի՞նչ բնույթ է կրելու նոր իրականությունը, ի՞նչ գաղափարներ են բերում իրենց հետ նոր ղեկավարները, ի՞նչ հենցայնների վրա է կառուցվելու հասարակական կյանքը: Ժողովրդին ծանոթ էր միայն Նիկոլ Փաշինյանը, ով հեղափոխության նպատակ հռչակեց «կոռուպցիայի դեմ անհաշտ պայքարն» ու «սիրո եւ հանդուրժողականության» հասարակության ստեղծումը, մինչդեռ ավելի կոնկրետ քայլերն ու դրանք իրականացնող անձինք լայն հասարակությանը հայտնի չէին: Ընդունենք, որ գոնե կենցաղային մակարդակով զգալիորեն նվազել են հասարակ քաղաքացուն ծանոթ կոռուպցիոն երեւոյթները: Սակայն պետք է հասկանալ, որ կոռուպցիան ունի բազմաթիվ դրսեւորումներ, որոնցից շատերը ծանոթ չեն հասարակ մահկանացուներին: Իմ խորին համոզմամբ՝ վերոնշյալ դրական միտումը ժամանակավոր բնույթ չի կրի միայն այն դեպքում, եթե մենք սովորենք կոռուպցիան ընկալել ընդամենը որպես անբարոյականության դրսեւորումներից մեկը: Այսինքն անհրաժեշտություն կա պայքարել անբարոյականության դեմ դրանով իսկ բացառելով նաեւ նրա բոլոր հնարավոր հետեւանքները՝ այդ թվում՝ նաեւ կոռուպցիան: Սակայն դրա համար պետք է ընդունել բարոյական արժեքները եւ հետեւել դրանց, ինչը չի արվում ու ստեղծվում է վտանգավոր անորոշություն: Խորապես համոզված եմ, որ «կոռուպցիա» երեւոյթը չի վերանա, քանի դեռ մեր երկրում տիրում է նյութապաշտու-

թյան մթնոլորտը, «սեր» չի լինի, քանի դեռ տառապում ենք փառասիրության եւ ցանկասիրության մոլուցքով, իրական «հանդուրժողականություն» չի լինի, քանի դեռ որոշ «իրավապաշտպանների» եւ «հասարակական ու քաղաքական գործիչների» կողմից հավասարության մշան է դրվում սահմանապահ գյուղի բազմաշարժար մոր եւ «սեքս աշխատողի» կամ տրանսգենդերի միջեւ: Դեռ ավելին, ամենաբարձր ատյաններում ընդունելության են արժանանում եւ ծայրի իրավունք ստանում տարատեսակ այլաբանությունների ներկայացուցիչներ՝ դրանով իսկ քարոզելով իրենց արատավոր կենցաղն ու անհանդուրժողականությունն ու վիրավորանք ցուցաբերելով Հայաստանի Հանրապետությունում բացարձակ մեծամասնություն կազմող հայքրիտոնյաներին ու մեր զավակների նկատմամբ: Ազդեցիվ փոքրամասնության որոշ ներկայացուցիչների կողմից անթաքույց փորձեր են արվում հերքել կամ առնվազն կասկածի տակ ղնել դարերի ընթացքում իրենց ճշմարտացիությունն ապացուցած եւ հայ ժողովրդի գոյությունն ապահոված այնպիսի հենասյունային արժեքներ, ինչպիսիք են հայրենասիրությունը, հայ ավանդական ընտանիքը, Հայ առաքելական սուրբ եկեղեցին եւ մեր քրիստոնեական դավանանքը: Կեղծ հումանիզմով քողարկված փորձ է արվում (մասնավորապես երիտասարդների շրջանում) սերմանել մի շատ վտանգավոր թեգ. «Չկան ճշմարիտ արժեքներ, կան միայն կարծիքներ»: Ցավով պետք է նշեմ, որ այս ամենը սկսում է համակարգային բնույթ կրել, ինչի դրսեւորումն են համարում նաեւ վերջերս սկսված բանավեճը «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան դպրոցական առարկայացանկից դուրս թողնելու վե-

րաբերյալ: Ու հիմա հասարակ մարդու եւ, ինչը շատ ավելի վտանգավոր է, երիտասարդների շրջանում բազմաթիվ հարցեր են առաջանում: Օրինակ, հայրենասիրությունը շիզոֆրենիա՞ է, թե՞ հայ մարդու գոյության կարեւորագույն նախապայման, տարատեսակ աղանդներով ազգը պառակտելն է ողջամիտ, թե՞ Հայ առաքելական եկեղեցու փրկարար հովանուները ազգը համախմբելը, ազգային ավանդական արժեքներին հետեւելն է նորմալ, թե՞ այլաբանական լինելը, ավանդական ընտանիքի մայր լինելն է նախընտրելի, թե՞ պոռնկությամբ զբաղվելը, թմրանյութային զբաղվելն է խրախուսելի, թե՞ առողջ արելակերպ վարելը: Ցավովորություն է ստեղծվում, որ նպատակ է դրված ձեւավորելու անհայրենիք, սպազոգային, անբարոյական, անսեռ, միայն իր իրավունքներով եւ ցանկությունների բավարարմամբ մտահոգ «քաղաքացու» տեսակ: Ընդունենք, որ ոչ վաղ անցյալում այսպիսի հարցադրումներն արբուրդային կհամարվեին, սակայն, ցավոք, ինչպես ասում են, «իրավիճակ է փոխվել»: Եվ հիմա այս ու բազմաթիվ այլ հարցեր յուրաքանչյուրիցս հստակ դիրքորոշում են պահանջում, իսկ դրանց բացակայությունն անխուսափելիորեն հանգեցնում է կործանարար անորոշության եւ քաոսի:

Հ.Գ. Այս օրերին ազգովի նշում ենք մեր մեծերի՝ Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտասի 150-ամյակն ու իրար հերթ չտալով մեջքերումներ անում նրանց ստեղծագործություններից: Ինքս ինձ հարց եմ տալիս, իսկ նրանք ինչպե՞ս կբնութագրեն մեր ժամանակները:

Խաչատուր Բաղայան

Սյունիքի մարզպետ Յունան Պողոսյանին, Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցին՝ մի՞թե անլուծելի է Խանաձախում հրկիզված տների վերականգնման խնդիրը

Ինճերորդ ամիսն է, ինչ Խանաձախում գտնվող մեր տունը հրո ճարակ է դարձել: Դիմել ենք վերադաս մարմիններին՝ հանրապետության վարչապետ, պաշտպանության նախարար, նաև Սյունիքի մարզպետարան, եւ ոչ մի արձագանք, ինչպես ասում են՝ ձայն բարբառո հանապատի: Մի՞թե այդքան արհամարհական վերաբերմունք կլինի, արդյո՞ք նախկին իշխանություններն այդքան անհետեւանք կթողնե՞ին քաղաքացու դիմումը, եւ դա այն դեպքում, երբ նա գրկվել է իր տանն ապրելու հնարավորությունից:

Վիրահատվել են, այժմ գտնվում են Գորիտում՝ դստեր տանը, որդիս, հարսս, թոռնիկս՝ հարսիս հայրական օջախում, որտեղ ծանր են պայմանները: Անգամ հարսս հանդիպել է վարչապետին, երբ նա աշխատանքային այցով Գորիտում էր, ներկայացրել մեր ծանր վիճակը: Նիկոլ Փաշինյանն ասել է, որ ոչնչից տեղյակ չէ: Ապա ինչո՞ւ պատասխանատվության չի ենթարկել պաշտոնյային, ով ստացել է դիմումը, բայց իրեն տեղյակ չի պահել: Ոչ մեկից ոչ մի պատասխան չենք ստացել: Առողջական վիճակս ծանր է, այլապես կգայի Կապան՝ անձամբ հանդիպելու Սյունիքի մարզպետին: Անգամ չեմ կարողանում քայլել:

Գոնե գոհ եմ, որ ձեր թերթում մեզ պա-



Յունան Պողոսյան

տուհասած աղետի մասին գրել եք, նույնիսկ այդ հրապարակումը ոչ մի ազդեցություն չի գործել ղեկավար անձանց վրա: Բացի այդ, ինչպես ասացի, դիմել ենք պաշտպանության նախարարին, մահացած ազատամարտիկի ծնող եմ, տղաս նախ՝ ծառայությունն անցկացրել է Աֆղանստանում, որից հետո մաս-



Ներսես Շադունց

նակցել է Արցախյան շարժմանը, սահմանների պաշտպանությանը: Լաչինի միջանցքում վիրավորվել է, ստացած վերքերից մահացել: Այսքանից հետո մեր ընտանիքն արժանանում է նման անտարբեր վերաբերմունքի:

Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյանը խոստացել է, որ հովանավոր

կգտնի՝ մեր տան մի սենյակը նորոգելու համար, գոնե ես վերադառնալիս իմ օջախը: Թե չէ՝ անսահման վիրավորական է տարեց մարդու համար թափառական կյանք վարելը: Ցավալի է, որ իշխանափոխությունից հետո այսպիսի վիճակ է տիրում: Մի՞թե այդպես կարելի է վարվել մահացած ազատամարտիկի հոր հետ: Բացի այդ, կես դար զբաղվել են մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործով: Դրանցից զատ՝ որդիս ու հարսս մանկավարժներ են, այսքանից հետո ինչպե՞ս դաստիարակեն մատաղ սերնդին, երբ իշխանությունների անհոգի ու անտարբեր վերաբերմունքի հետեւանքով դարձել են անօթեան: Եվ ամեն անգամ թոռնիկս, որ սովորում է տասնմեկերորդ դասարանում, հարց է ուղղում ինձ. «Ե՞րբ ենք միասին ապրելու մեր տանը»: Ի՞նչ պատասխանեն:

Գոնե շինանյութերով ապահովվեն, էլի են ասում, տան մի սենյակը կարգի բերեմք, հրդեհից հետո գոնե պատերը կանգուն են մնացել: Զգիտեմ՝ կօզնի թերթի միջամտությունը դուրս գալու այս անելանելի վիճակից: Համենայն դեպս կրկին դիմում են ձեր օգնությանը:

Հրանտ Բաղդասարյան

«Եվրոպայի օրը» Կապանում

Այս տարի Եվրոպայի օրվան նվիրված տոնակատարությունները մեկնարկեցին Կապանից: Այդ առիթով մայիսի 11-ին մարզկենտրոն էին ժամանել Հայաստանում Եվրոպական միության դեսպան Պյոտր Սվիտալսկին ներկայացուցչական պատվիրակության հետ: Բանն այն է, որ «Եվրոպայի օրվա» տոնակատարության շրջանակում Կապանի Գործարանային մայրուղի-15 հասցեում տեղի ունեցավ պլաստիկ թափոնների վերանշակման նորաստեղծ արտադրամասի պաշտոնական բացումը: Այն հիմնվել է վերազինվել է Եվրոպական միության «Բնապահպանական մարտահրավերների վերածումը հնարավորությունների» պլաստիկ թափոններից շինանյութի ստացում» ծրագրի շրջանակում:

Արտադրամասի բացմանը մասնակցում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների ղեկավարները, ծրագրի իրականացմանը նպաստած կազմակերպություններ, գործընկերներ: Բացման խոսքում Պյոտր Սվիտալսկին, մասնավորապես, նշեց, թե երբ երբ տարի առաջ նախատեսում էին, թե ինչ ծրագրեր պիտի իրականացնեն մեր տարածաշրջանում, ինքը հատկապես թերահավատորեն էր տրամադրված այդ ծրագրի հանդեպ: Եվ շատ ուրախ է, որ իր թերահավատությունը փարատվել է: Եվ այդ համատեքստում երախտագիտություն հայտնեց նախաձեռնության հեղինակներին ու ծրագիրն իրականացնողներին:

Սյունիքի մարզպետ Յունան Պողոսյանը գոհունակություն հայտնեց այն առիթով, որ իրականացված ծրագիրն ընդգծված բնապահպանական նշանակություն ունի տարածաշրջանի համար: «Ձեռնարկությունը, որ փորձնական աշխատանքներից հետո կսկսի գործել, կարծում են՝ բարիք է բերելու տարածաշրջանին եւ Կապան քաղաքին»:

Մենք պատրաստ ենք առանց ավելորդ վարչարարության, առանց ավելորդ բյուրոկրատական քաշքշուկի կանգնել ամեն մի նոր նախաձեռնության կողքին»,- համոզմունք հայտնեց Սյունիքի մարզպետը:

Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը շնորհակալություն հայտնելով ծրագրի նախաձեռնողներին եւ իրականացնողներին՝ նշեց, որ ծրագիրը մեկնարկել է 2016 թվականին եւ կարելու է նոր արտադրամասի տնտե-



սական եւ բնապահպանական նշանակությունը՝ մասնավոր նոր աշխատատեղերի ստեղծելու առումով: Մուտքը երիզող ժապավենը կտրելուց հետո արարողության մասնակիցները պլաստիկ թափոններից շինանյութի ստացման արտադրամասում ծանոթացան արտա-

դրության տեխնոլոգիական գործընթացներին եւ նոր արտադրատեսակների նմուշներին՝ փողոցի եզրաքար, կոմիդոր, սալիկներ եւ այլն: Ներկաներին հատկապես հետաքրքրեց արտադրանքի բաղադրությունը եւ իրացման հնարավորությունը:

Առաջին անգամ Սյունիքում հիմնվում է ստարտափ վերանշակման գործարան, որտեղ պլաստիկ թափոնները որոշակի տեխնոլոգիական գործընթացից եւ ավագի հետ խառնելուց հետո վերածվում են շինանյութի: Արտադրության համար հունք հանդիսացող պլաստիկ թափոնը հավաքվում է Եղեգնաձորից մինչեւ Մեղրի ընկած հատվածում ներառելով Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի ինը համայնք: Սալահատակի եզրաքարերի եւ փողոցային սալիկների առաջին խմբաքանակը կուղղվի այն համայնքների տարածքների բարելավմանը, որոնք արտադրական գծին տրամադրել են պլաստիկ թափոններ: Երկամյա ծրագրի բյուջեն կազմել է մոտ 750 հազար եվրո, որից շուրջ 510 հազար եվրոն տրամադրել է Եվրոպական միությունը: Ծրագրի բյուջեի 25 տոկոսը ֆինանսավորել են ՀՀ կառավարությունն ու ծրագիրն իրականացնողները՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը եւ Կապանի քաղաքապետարանը:

Արարողությունից հետո պատասխանելով լրագրողների հարցերին՝ Պյոտր Սվիտալսկին ասաց, թե ովքեր ներգրավված էին ծրագրում, հրաշալի աշխատել են, եւ այսօր ներկաներն էլ համոզվեցին, որ արտադրամասը հստակ գործում է: Դեսպանը կարեւորեց նաև արտադրանքի գովազդի կազմակերպումը, որը ճիշտ իրականացնելու դեպքում հաջողությունը երկար սպասել չի տա: «Իսկ ծրագիրը կլինի՞ շարունակական», - «Սյունյաց երկրի» հարցին ասաց, որ ինքը կարող է ընդամենը մաղթել այդ ծրագրի զարգացում եւ ընդլայնում:

Արտադրամասի բացումից հետո մարզկենտրոնի Գարեգին Նժդեհի հրապարակում մեկնարկեցին տոնական միջոցառումներ, որոնք այդտեղ էին բերել փողրին ու մեծին: Ներկաներին «Եվրոպայի օրվա» առիթով ողջերթի խոսքեր հղեցրին Պյոտր Սվիտալսկին եւ Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը: Անցկացվեցին մարզական մրցումներ: Փոքրիկներն իրենց ուժերը չափեցին հեծանվավազքում: Բազմամարտում եւ կշռաքարերի բարձրացման մրցություն աչքի ընկածներին մրցանակներ հանձնեց անձամբ Պյոտր Սվիտալսկին:

Տոնակատարության ավարտին ելույթ ունեցավ «Նեմրա» ռոք խումբը:

Կահրամ Օրբեյան

Նիկոլ Փաշինյան. «Հանքերի իրական սեփականատերերին կկարողանանք բացահայտել, հակառակ դեպքում այդ հանքերը չեն կարող շահագործվել»



Մենք հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտման ուղղությամբ օրենսդրական փաթեթ ենք ներկայացրել, որը հուլիսի 1-ից մտնում է ուժի մեջ: Այս մասին մայիսի 21-ին ՊԱՍ-ում «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովի ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով՝ փորձագետները հավաստիացնում են, որ այս փաթեթն անխուսափելի է դարձնելու, որ այս ոլորտում մենք իրական սեփականատերերին կկարողանանք բացահայտել, հակառակ դեպքում՝ այդ հանքերը չեն կարող շահագործվել:

Փաշինյանը մտահոգություն հայտնեց, որ հանքարդյունաբերության ոլորտում արտահանման մոտ 90 տոկոսը խտանյութն է, ինչը մեծ խնդիր է. «Սա նշանակում է, որ մեր պետությունը հանքահումքային երկրի կարգավիճակ ունի՝ սրանից բխող հետեւանքով: Մեր խնդիրն է հանքարդյունաբերության ցիկլը հնարավորինս երկարացնել: Այս առիթով կառավարությունը բանակցություններ է իրականացնում, մի քանի ներդրումային առաջարկներ կան, մենք հույս ունենք, որ դրանցից գոնե մեկը իրականություն կդառնա: Մենք համեմայնդեպս դրա համար կանենք ամեն ինչ», -ասաց ՀՀ վարչապետը:



Հանքերով զբաղվող շուրջ 13 ընկերությունների բաժնեմասերը տարբեր ժամանակներում ձեռք են բերվել ու վաճառվել օֆշորային կազմակերպությունների

ՀՀ տարածքում ոչ մետաղական հանքարդյունաբերության զբաղվելու թույլտվություն ունեցող 2 եւ երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու թույլտվություն ունեցող շուրջ 11 ընկերությունների բաժնեմասերը տարբեր ժամանակներում ձեռք են բերվել մի քանի անձանց եւ կազմակերպությունների կողմից ու վաճառվել մի մասը Կայմանյան կղզիներում, մյուս մասը՝ Մարշալյան կղզիներում ու Կիպրոսում հիմնադրված կազմակերպությունների: Այս մասին Tert.am-ի հարցմանն ի պատասխան նշել են ՀՀ քննչական կոմիտեից:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստերից մեկում հայտնել էր, որ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն իրեն ուսումնասիրություն է ուղարկել, որտեղ ասվել է, թե Հայաստանի հանքերի շատ մեծ մասի դեպքում որպես սեփականատեր գրանցված են օֆշորային ընկերություններ: Վարչապետի հանձնարարականով այդ գործերը հասցեագրվել է ՀՀ էներգետիկայի նախարարությանը, որտեղից Tert.am-ին հայտնեցին, որ ՀՀ քննչական կոմիտեի կողմից գործ է հարուցվել:

Ներկայացնում ենք քննչական կոմիտեի պատասխանն ամբողջությամբ:

«Չեր 13.05.2019թ. հարցման կապակցությամբ հայտնում են, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հանքարդյունաբերության ոլորտում տեղի ունեցած գործարքների ուսումնասիրության արդյունքում ներկայացված հաղորդման հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարելի է գործերի քննության գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության պարզվել է, որ ՀՀ տարածքում ոչ մետաղական հանքարդյունաբերության զբաղվելու թույլտվություն ունեցող 2 եւ երկրաբանահետախուզական աշխատանքներ կատարելու թույլտվություն ունեցող շուրջ 11 ընկերությունների բաժնեմասերը տարբեր ժամանակներում ձեռք են բերվել մի քանի անձանց եւ կազմակերպությունների կողմից ու վաճառվել մի մասը Կայմանյան կղզիներում, մյուս մասը՝ Մարշալյան կղզիներում ու Կիպրոսում հիմնադրված կազմակերպությունների: 2014-2015թթ. վերը

նշված ընկերությունների գործունեությունը դադարեցվել է, այդ ընթացքում ընկերությունների հանքային իրավունքների ժամկետներն ավարտվել են ու դրանք երկարացնելու կամ պաշար հաստատելու գործընթաց չի իրականացվել: Նշված ընկերությունները հանքարդյունահանում չեն իրականացրել եւ շահույթ չեն ստացել: Ներկայումս այդ ընկերությունները ՀՀ տարածքում հանքային իրավունքներ չունեն եւ որեւէ գործունեություն չեն իրականացնում»:

Ինչ վերաբերում է հարցերին, թե որ հանքերի մասին է խոսքը, ովքեր են ընկերությունների սեփականատերերը, ինչ փուլում է հարուցված գործը, քննչական կոմիտեից նշել են, որ այդ հարցադրումների կապակցությամբ տեղեկատվություն չեն կարող տրամադրվել, քանի որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն այն պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ:

tert.am

Դատարանների ելուժուլտն արգելափակելու՝ վարչապետի կոչը խիստ վրանգավոր է իրավական համակարգի անվրանգության ու կայունության համար. ՄԻՊ-ը պահանջում է անհապաղ դադարեցնել նման պահանջները



ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը հանդես է եկել հայտարարությամբ ՀՀ վարչապետի՝ երկրի բոլոր դատարանների էլեքերն ու մուտքերը արգելափակելու կոչի վերաբերյալ:

Հայտարարությունը ներկայացնում ենք ստորև.

«Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վարչապետի՝ երկրի բոլոր դատարանների էլեքերն ու մուտքերը արգելափակելու կոչին՝ արձանագրելով:

1. Հայաստանի Հանրապետությունում պետք է երաշխավորված լինի պետական իշխանության իրականացումը Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Այդ իշխանություններից կան դրանք ներկայացնող պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրն անվերապահ պարտականություն ունի՝ հարգանքով վերաբերվելու մյուսին եւ առաջնորդվելու միայն իրեն վերապահված կարգավիճակի հրամայականով ու սահմաններով:

2. Հայաստանի Հանրապետությունում դատարանների գործունեությունը եւ նրանց կողմից արդարադատության իրականացմանը որեւէ միջամտություն արգելվում է:

3. Երկրում դատական արդյունավետ իշխանության պահանջը ենթադրում է դատարանի եւ դատավորի լիարժեք անկախություն ինչպես օրենսդիրից ու գործադիրից, ցանկացած այլ մարմնից կամ պաշտոնատար անձից, այնպես էլ միջամտության բացարձակ արգելք դրանցից դուրս որեւէ այլ մեկից կամ անձից:

4. Այս պահանջները պատահական չեն: Դատարանները կոչված են երաշխավորելու երկրի իրավական անվտանգությունը եւ իրավական համակարգի կայունությունը: Նրանց գործունեությունն ուղղված է մարդու իրավունքների պաշտպանության անխափան ապահովմանը: Դատարաններն իրենց ամենօրյա գործունեությամբ պարտավոր են ապահովել մարդու անձնական ազատության, արդար դատաքննության եւ

մյուս իրավունքների իրացումը:

5. Հայաստանի դատական համակարգում, իհարկե, կան խնդիրներ, այդ թվում՝ կապված դատարանների արտաքին ու ներքին անկախության, դատարանի նկատմամբ քաղաքացու վստահության պակասի, արդար դատաքննության լիարժեք երաշխավորման հետ: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքները վկայում են, որ առկա են դեպքեր, երբ առանձին դատավորներ իրենց վարքագծով վնասում են դատական համակարգի հեղինակությունը: Այս ամենը նաեւ չբաղած դասերի ու այն բանի հետեւանք է, որ նախկինում պատշաճ ուշադրություն չի դարձվել ոլորտի խնդիրներին: Այս թեմաներին մանրամասն անդրադարձեր են կատարված Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումներում ու զեկույցներում: Սակայն այս ամենով հանդերձ, առկա խնդիրների լուծմանը պետք է հասնել բացառապես իրավական եղանակներով:

1. Այդ ողջ գործընթացում միեւնույն է՝ զլխավոր եւ բնույթով բացառիկ հանձնառությունը պետք է լինի դատական իշխանության անկախության բարձր արժեքի երաշխավորումը, որն էլ ուղիղ ազդեցություն է ունենում արդար դատաքննության եւ մյուս սահմանադրական իրավունքների վրա:

2. Այստեղից է բխում սահմանադրական ուղիղ պահանջն այն մասին, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:

3. Աստի, ՀՀ վարչապետի կոչը կամ

Արցախյան հիմնախնդիր. բանակցությունների քրոնիկոն

Էջ 1
պատվիրակության մաս եւ թե՛ որպէս աշխատանքային խմբի անդամ: Ի դեպ, վերջին տարբերակն առաջարկել էր պաշտոնական Մոսկվան:

Շատ շուտով՝ ԽՍՀՄ գոյության իրավաբանական դադարեցումից հետո, Ելցին-Նազարբաեյն նախաձեռնությունը մարեց: Կողմերն այդպէս էլ համաձայնության չեկան ժելեզնովորակ կոմյունիստների դրոյթների իրականացման կարգի շուրջ:

Իրանի դերը բանակցային գործընթացում. կյանքի չկոչված հռչակագիր

Առաջին փուլում Ռուսաստանի խաղաղարար նախաձեռնություններն իրականացվում էին «ժելեզնովորակ գործընթացի» շրջանակներում՝ Ղազախստանի հետ համատեղ: Նրանից հետո, երբ «ժելեզնովորակ գործընթացն» աստիճանաբար սպառեց իրեն, ադրբեջանա-ղարաբայան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ աշխատանքների ակտիվացման նպատակով 1992 թ. մայիսի 5-ին Ռուսաստանում ստեղծվեց միջնորդական առաքելություն, որը գլխավորեց ՌԴ ԱԳՆ հատուկ հանձնարարություններով դեսպան Վլադիմիր Կազիմիրովը:

ԽՍՀՄ փլուզումից հետո հարեւան Իրանը եւս առաջին երկրներից էր, որը պատրաստ էր միջնորդական ջանքեր գործադրել՝ ադրբեջանա-ղարաբայան հակամարտության խաղաղ կարգավորման տարբերակներ որոնելու համար:

1992 թ. փետրվարին Իրանի արտաքին գործերի նախարար Ալի Աբբաս Վելայաթին հակամարտության կարգավորման հարցով բանակցություններ նախաձեռնեց Չայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ: Նա հայկական ու ադրբեջանական պատվիրակություններին հրավիրեց Թեհրան հետագա խորհրդակցություններն անցկացնելու համար: Չայաստանի նախագահի խորհրդական Վահան Փափազյանի մասնակցությամբ անցկացվեցին մի շարք հանդիպումներ, որոնց արդյունքում մշակվեց 14 կետից բաղկացած հայտարարության նախագիծ: Նախագիծն այդպէս էլ վերջնականապէս չընդունվեց, որովհետեւ կողմերը համաձայնության չեկան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին առնչվող կետի շուրջ:

Պաշտոնական Թեհրանը ձեռնարկեց եւս մի քանի միջնորդական փորձ, բայց ապարդյուն: Իրանի ջանքերով 1992 թ. մայիսի 7-ին Թեհրանում տեղի ունեցավ Չայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Յակուբ Մամեդովի հանդիպումը, որի արդյունքում ստորագրվեց համատեղ հռչակագիր, որը սակայն կյանքի չկոչվեց, ինչից հետո Իրանը դադարեցրեց միջնորդական գործունեությունը:

ՄԱԿ-ը չգտավ քիմիական զենքի կիրառման փաստը հաստատող ապացույցներ

1992թ. ակտիվություն էր ցուցաբերում նաեւ Միացյալ ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), որի աշխատանքները տեսանելի դարձան ԽՍՀՄ փլուզումից հետո: Մտահոգված լինելով տարածաշրջանում իրավիճակի վատթարացմամբ՝ ՄԱԿ-ը ադրբեջանա-ղարաբայան հակամարտության գոտի ուղարկեց փաստա-հավաք առաքելություններ, որոնցից մեկի նպատակն էր ստուգել՝ արդյո՞ք ադրբեջանական կողմի պնդումները, թե իր դեմ քիմիական զենք են կիրառում, համապատասխանում է իրականությանը, թե՞ ոչ: ՄԱԿ-ի փորձագետների եզրակացության համաձայն՝ «քիմիական զենքի կիրառման փաստը հաստատող որեւէ ապացույց չի ներկայացվել»:

Մեկ տարի անց՝ 1993 թվականին, ռազմական ակտիվ գործողությունների ժամանակ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը մի քանի ամիսների կտրվածքով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ընդունեց հայտնի չորս բանաձեւերը՝ 822, 853, 874, 884, որտեղ խոսվում էր կրակի, ռազմական եւ թշնամական գործողությունների անհապաղ դադարեցման մասին: Դրանց նպատակն այդ փուլում ռազմական գործողությունները դադարեցնելն էր:

Ուղիղ եւ հեռակա բանակցություններ Ղարաբաղի ու Ադրբեջանի միջև

1992 թվականն առանձնացել է նաեւ Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ ուղիղ բանակցություններով: Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի առաջին ուղիղ կոնֆիդենցիալ շփումները տեղի են ունեցել 1992թ. սեպտեմբերի 5-ին Մոսկվայում՝ այդ տարիներին ԼՂՀ պետական պաշտպանության կոմիտեի նախագահի խորհրդականի պաշտոնը զբաղեցնող Արկադի Ղուկասյանի եւ Ռուսաստանի Դաշնությունում Ադրբեջանի դեսպան Յիքմեթ Յաջիզադեի միջեւ: Սրա նպատակը ռազմական գործողությունները կասեցնելուն միտված, այսպէս կոչված, «օպերատիվ կապի»



հաստատումն էր:

Մեկ տարի անց՝ 1993 թվականին, Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում անցկացվեցին եռակողմ խորհրդապահական բանակցություններ Արկադի Ղուկասյանի, Յիքմեթ Յաջիզադեի եւ Չայաստանի նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանի միջեւ:

Ադրբեջանում տեղի ունեցած նախագահական ընտրությունների արդյունքում իշխանության եկավ Յեյրար Ալիևը, եւ ուղիղ շփումները շարունակվեցին հեռախոսակապի ու ֆաքսի միջոցով:

Առաջին հեռախոսազրույցը տեղի ունեցավ 1993 թ. հունիսի 27-ին՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սաֆար Աբեյեի եւ ԼՂՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի միջեւ:

1993թ. տեղի ունեցան եւս մի քանի հանդիպումներ ու այդ շփումների շնորհիվ Ադրբեջանի եւ Ղարաբաղի միջեւ ձեռքբերվեց մոտ տասը պայմանավորվածություն ռազմական գործողությունների սահմանափակման, ժամանակավոր զինադադարի կամ դրա երկարաժամկետ մասին, որոնք ճանապարհ հարթեցին 1994 թ. մայիսին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ անժամկետ հրադադարի հաստատման համար:

Չնայած նրան, որ ուղիղ հանդիպումները տեղի էին ունենում բարձր մակարդակով, ձեռք էին բերվել պայմանավորվածություններ, ուղիղ շփումներն ու եռակողմ բանակցությունները տեղի ունեցան մինչեւ 1997 թվականը:

Կնքվեց զինադադարի մասին պայմանագիրը

1994թ. մայիսին Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը եւ Չայաստանը կնքեցին զինադադարի մասին պայմանագիր, որն ուժի մեջ է մինչ օրս, թեւէ պարբերաբար խախտվում է ադրբեջանական կողմից:

Մայիսի 9-ին Լեռնային Ղարաբաղում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը նախապատրաստեց անժամկետ հրադադարի մասին համաձայնագիրը, որը նույն օրը ստորագրեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Մամեդրաֆի Մամեդովը: 1994թ. մայիսի 10-ին Երեւանում համաձայնագիրը ստորագրեց պաշտպանու-

թյան նախարար Սերժ Սարգսյանը, իսկ մայիսի 11-ին՝ ԼՂ բանակի հրամանատար Սամվել Բաբայանը:

Սա այն կարեւոր փաստաթղթից է, որի տակ Լեռնային Ղարաբաղի ստորագրությունն է:

Ինչպե՞ս ձեւավորվեց ԵԱԿ Մինսկի խումբը

1992թ. մարտի 24-ին Յելսինկիում կայացավ ԵԱԿ (Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցություն) նախարարների խորհրդի արտահերթ նիստը, որի ժամանակ որոշվեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ հնարավորինս արագ խորհրդածրոյակ հրավիրել Մինսկում, որը կոնֆլիկտի խաղաղ կարգավորման

1997-1998 թթ. բանակցությունները վերսկսելու համար Մի-ն կողմերին առաջարկեց հակամարտության կարգավորման երեք նախագիծ՝ «Ադրբեջանա-ղարաբայան հակամարտության կարգավորման համապարփակ համաձայնագիր» (1997 թ. հունիս), «Ադրբեջանա-ղարաբայան զինված հակամարտության դադարեցման վերաբերյալ համաձայնագիր» (1997 թ. սեպտեմբեր), «Ադրբեջանա-ղարաբայան զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների վերաբերյալ համաձայնագիր» (1998 թ. նոյեմբեր):

Ի սկզբանե ձեւավորվել է հակամարտության կարգավորման 2 մոտեցում՝ փուլային եւ փաթեթային լուծում: Փուլային լուծման տրամաբանությունը ենթադրում է համաձայնության ձեռքբերում ԼՂ կարգավիճակին չառնչվող հարցերում: Մինչեւ 1995 թ. վերջը գործընթացում գերիշխել է այդ մոտեցումը, եւ հակամարտության կողմերը բանակցել են զինված հակամարտության դադարեցման մասին քաղաքական Մեծ համաձայնագրի կնքման շուրջ, բայց 1995 թ. վերջին բանակցային գործընթացը փակուղի է մտել, ԵԱԿ նախարարների խորհրդի որոշմամբ սկսվել են զուգահեռ, ուղիղ բանակցություններ Չայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հատուկ բանազմացների միջեւ:

1996 թ. դեկտեմբերին ԵԱԿ Լիսաբոնի գագաթնաժողովում փորձ է արվել բանակցությունները դուրս բերել ստեղծված փակուղուց, բայց այն ավելի է խորացրել փակուղային իրավիճակը, որովհետեւ ներկայացված հայտարարությունը չի բխել Չայաստանի շահերից: Չայաստան դեմ է քվեարկել այդ հայտարարությանը, ինչից հետո տեղի է ունեցել դիրքորոշումների կարծրացում:

1998 թ. փետրվարի 4-ին Չայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն: Չայաստանի նոր ղեկավարությունը որդեգրեց հակամարտության կարգավորման փաթեթային կամ համապարփակ մոտեցում եւ առանց նախապայմանի բանակցությունները վերսկսելու դիրքորոշում: Մինսկի խմբի համաձայնագիծները 1998 թ. սեպտեմբերյան այցի ժամանակ ներկայացրել են «ընդհանուր պետության» գաղափարը, որը վերջնականորեն ձեւակերպվել է նոյեմբերին ներկայացված առաջարկում:

1999 թ. ապրիլին Մոսկվայում ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի նիստի շրջանակներում, այնուհետ Վաշինգտոնում, ՆԱՏՕ-ի 50-ամյա հոբելյանին նվիրված գագաթնաժողովի շրջանակներում, տեղի են ունեցել Չայաստանի նախագահ Ռոբերտ Զոչարյանի եւ Ադրբեջանի նախագահ Յեյրար Ալիևի առաջին ուղղակի հանդիպումները, որոնք էլ սկիզբ են դրել ամենաբարձր մակարդակով հանդիպումների մի ամբողջ շարքի:

Ռոբերտ Զոչարյանի եւ Յեյրար Ալիևի հաջորդ հանդիպումները տեղի ունեցան 2001 թ. հունվարի 26-ին եւ մարտի 4-5-ին՝ Փարիզում Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի մասնակցությամբ:

Քի-Վեսթում կողմերը մոտ էին հակամարտության կարգավորմանը

Փարիզյան հանդիպումներին հետեւեցին Չայաստանի եւ Ադրբեջանի նախագահների բանակցությունները Քի-Վեսթում: Քի-Վեսթի հանդիպումը բացեց ԱՄՆ պետարտուղար Քոլին Փաուելը: Դրա նախապատրաստմանն ու անցկացմանը մասնակցեցին նաեւ ԵԱԿ Մինսկի խմբի մյուս երկու համանախագահ երկրների դիվանագետները: Բանակցությունների ավարտին Չայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ Վաշինգտոնում հանդիպեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը: Այնուհանդերձ, Քի-Վեսթի բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունները չիրագործվեցին:

Այդ փաստաթուղթը կարող էր վերջնական լուծման հանգեցնել, քանի որ բոլոր հարցերին համապարփակ կերպով էր անդրադառնում: Քի-Վեսթում իր համաձայնությունը տալուց հետո, վերադառնալով Բաքու, նախագահ

Փուլային ու փաթեթային տարբերակներ՝ բանակցային սեղանին




Հայրենիքս. հայացք Տանձադասի գյուղից



ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ք, Գորիս

-Նա է, որ ձիգ փաթաթված է այգեստաններով ու կուսական անտառներով:
-Նա է, որտեղ աշնանը նստած ձյան վերջին հալոցքը լինում է ապրիլի վերջերին:
-Նա է, որի գարունը սկսվում է Ռոտամի գեղատեսիլ ափերից ու ավարտվում սիգապանոս Գյազբեյի կատարին:
-Նա է, որի քարափները տարեկան մեկ անգամ հարսներանգ ծաղիկներով զարդարում է վայրի նշենին:
-Նա է, ուր գարունը նշանավորվում է սալորենու, ալոճենու եւ սզենու սպիտակ փրփուրով:
-Նա է, որտեղ տանձենին ու կեռասենին ծաղկում են մի առանձնահատուկ շիկնանքով եւ կկոցած աչքերով նայում արեւին:
-Նա, ուր խնձորենու ազնիվ ու վայրի տեսակները ծաղկունքը սկսում են մուգ վարդագույնով եւ ավարտում մասրային երանգով:
-Նա, որի քարափներին ամենից առաջ շիրիշն է ելնում ոտի:
-Նա է, որի դաշտերում, ճանապարհների, արահետների եզրերին ու անտառներում զանգակներով եւ բուրունավետ մանուշակով սկսվող ծաղկունքը չի ավարտվում:
-Նա, որի բնաշխարհի սքանչելի երանգները մեր տատիկները գորգեր ու կարպետներ են դարձրել:
-Նա է, որի շուրջ ամենուրեք պտղատու ծառեր եւ փիեր են՝ վայրի, թե ազնիվ տեսակներ,

րի,
-Նա, որի մրգերի ու հատապտուղների բերքահավաքը երբեք չի ավարտվում:
-Նա, ուր գարունը գյուղը գոտեւորում են լոբու, կարտոֆիլի եւ բազմատեսակ բանջարեղենի գեղարվեստական բարձրաճաշակ մարգերը:
-Նա, որտեղ տանձենին առաջին կաթուկը տալիս է հուլիսի վերջին եւ կաթոցը չի կտրվում մինչեւ ձմեռ:
-Նա է, որտեղի մրգով լիովին կշտանում են մարդ ու կենդանի:
-Նա է, որտեղ մասուրի, ծորենու, արոսենու եւ բուժական նշանակության մյուս բուսատեսակների բերքի հագիվ տասը տոկոսն է հա-



վաքվում:
-Նա, որի ծորերի հսկա ընկուզենիները ձգվում մինչեւ երկինք են հասնում:
-Նա, որի բնակիչները՝ խոր աշնանը, գիշերվա քամուց հետո՝ լուսաբացին, վազում են ծորերի թավուտներն ընկույզ հավաքելու:
-Նա, որի բնաշխարհից մեղուն անմահական հյութ է քամում:
-Նա, որի սառնորակ աղբյուրները հեքիաթ երգեր են հյուսում՝ կախարհող գույների:
-Նա է, որի ծորերի, քարափների խորշերում ձմեռում են արջեր եւ բազմատեսակ այլ գազաններ:
-Նա է, որի քարափներում՝ հազարամյակ-

ներ շարունակ, բեզարյան այծն է բնակվում, եւ խոր աշնանն արունները՝ ծերայերի վրա, էգերի համար, մահացու մարտեր են մղում:
-Նա է, որի քարափների գլուխը՝ տարին մեկ ներկում են կարմիր ու դեղին կակաչները, իսկ ունքերը՝ սպիտակաթույր թրլին:
-Նա, որի անտառներում եղնիկ է շրջում:
-Նա, որի վիհերի եւ ծորերի մուգ խորքերում խորհրդավոր լռություն է նստած:
-Նա է, որի կածանները, հեռվից, դեպի անդնդախոր ծորերը գլորած պարանների են նման:
-Նա, որի զույգ քարափների կազմած ջրվեժը մշտապես օրոր է առում նրան:
-Նա, որի ծորերում ու անտառներում, ար-

-Նա, որի քարափների խոժոռ ու կախ ունքերը սարսափ են ազդում, նայել չի լինում:
-Նա է, որի ժայռերին դաջված է մեր ժողովրդի ողջ պատմությունը:
-Նա է, որի քարափները խոսող են՝ երգող ու պատմող:
-Նա, որի շանթարգելը «Հաչա քար» ժայռի բարձր կատարին է:
-Նա է, որի անցած ուղին՝ մինչեւ հիմք, պարզել չի լինի:
-Նա, որի կիրճերն ու ծորերն այնպիսի մութով է լցվում, երբեմն էլ թխավով, որ մատող աչքին տանես, չի տեսնի:
-Նա, որի ժայռերը, համատարած, կրաքար է:
-Նա է, որ մի ժամանակ իր կառուցած գործարաններում կիր է արտադրել, անտառային թավուտներում փայտածուխ պատրաստել:
-Նա, որի բրուտները՝ հազարամյակներ շարունակ, աստվածային կավից կարաս, կուժ, կուլա, գավաթ են կենցաղային ամենաբազմազան իրեր են թրծել:
-Նա, որը հրաշք բնակերտ պատկերների հետ, հարուստ է նաեւ պատմական մեծարժեք հուշարձաններով, սրբավայրերով:
-Նա է, որի ծորերն ու վիհերը խոր են՝ անհատակ, նաեւ մուգ ու խեղդող:
-Նա, որի հազարամյա ջրաղացը հզոր սալաքարի վրա է, ու հիմա էլ բանուկ:
-Նա, որի Ջրաղացի գետ կոչվածի գյուղերում մի ժամանակ սովոր խմբերով լողում, ճովողում, ապա արեւկող էին անում ոչ միայն իր, այլ նաեւ հարեւան գյուղի երեխաները:
-Նա է, որի քարափին է լեռնային հզոր արծվի բույնը:
-Նա է, որի կալերում՝ մի ժամանակ, ճնճղուկների բուք էր:
-Նա է, որի այգիներում տիրում էին ճղճղան շարդը եւ մոշահավը:
-Նա է, որի արեւն ամռանը «Հաչա քարից» հինգ պարանաբոյ ծախից է ծագում, ձմռանը՝ մույնքան աչից:
-Նա, որը ոչ միայն մրցում է Մեծ Թունանյանի Լոռվա հրաշք բնաշխարհի հետ, այլ նաեւ տեղ-տեղ էլ հաղթում:
-Նա է, որի արշալույսներն այնքան ջինջ են ու մաքուր:
-Նա, որն ամեն օր քնում եւ արթնանում է աստվածային սրբության՝ Տաթևի վանքի ջերմ հայացքի տակ:
-Նա, որն ընկերոջս՝ Ռոմիկ Չարոթյունյանի ասածով, հավերժի ճանփող է:

Նվիրված մեծ քնարերգուին

Արիլին լրացավ հայ քնարերգության ինքնատիպ դեմքերից մեկի՝ Յուրի Կարապետի ծննդյան 105-ամյակը: Ազգային գրադարանային շաբաթի շրջանակում Սյունիքի մարզային գրադարանի սպասարկման բաժնում անցկացվեց ցերեկույթ «Խենթ Օնիկից՝ մայրապաշտ Շիրազ» խորագրով: Միջոցառման կազմակերպիչ՝ մարզային գրադարանի մատենագիտության եւ տեղեկատվության բաժնի մատենագետ Քրիստինե Վեգիյանը նախ անդրադարձավ բանաստեղծի անուրախ մանկությունը, երբ վեց տարեկանում գրկվելով հորից, ընկավ որբանոց եւ մորն օգնելու համար ստիպված էր թողնել որբանոցը: Այնուհետեւ անդրադարձ եղավ բանաստեղծի մայրական թեմային՝ «Հուշարձան մայրիկիս» գրքին, հնչեցին բանաստեղծություններ եւ երգեր՝ Շիրազի բանաստեղծություն-

ների տեքստերի հիման վրա: Ներկայացվեցին հետաքրքրական դրվագներ Շիրազի խենթութեամբ մանկությունից եւ պատանեկությունից: Մասնավորապես, պատանի Յուրիին մարզային որբ տղաների հետ ջուր էր ծախում եւ հետո խոստովանել է, որ այդ գործի մեջ էլ էր ծախողակ:
Սպասարկման բաժնի մի անկյունում ցուցահանդես էր բացվել «Շիրազը՝ անգուզական մայրերգակ» խորագրով: Ցերեկույթին ակտիվ մասնակցություն ունեցան Կապանի N2 ավագ դպրոցի 11-րդ դասարանիցիները, ովքեր հանդես եկան երգով եւ ասմունքով:
Միջոցառման կազմակերպիչը շնորհակալություն հայտնեց «Մշակութային նախաձեռնություններ» ՀԿ-ի նախագահ Թերեզա Գալստյանին եւ նրա փնակիցներին:

Վահրամ Օրբեյան

Երգչախմբային արվեստի փառատոն Սյունիքում

Երկու օր շարունակ Սյունիքում երգչախմբային արվեստի փառատոնի շունչն էր թեւածում: Կոմիտասի 150-ամյակին նվիրված «Երգող Սյունիք» փառատոնը մեկնարկեց մայիսի 17-ին Գորիսում, որին մասնակցեցին Գորիսի Աշոտ Սաթյանի անվան թիվ 1, Շառլ Ազնավուրի անվան թիվ 2, Շինուհայրի, Խնձորենկի եւ Սիսիանի երաժշտական դպրոցների երգչախմբերը: Հաջորդ օրը փառատոնը շարունակվեց Կապան մշակույթի կենտրոնում Կապանի արվեստի պետական քոլեջի, Կապանի երաժշտական դպրոցների, արվեստի մանկական դպրոցի, Քաջարանի եւ Մեղրու «Արեւիք» արվեստի դպրոցների երգչախմբերի մասնակցությամբ:

Փառատոնի բացմանը ողջերթի խոսք ասաց «Հայ երգչախմբային դիրիժորների ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Քրիստինե Շերոյանը, ով հույժ կարեւորեց մայրաքաղաքից հեռու բնակվող երեխաների օժանդակություն ցույց տալը, մասնավորապես շնորհալի շատ մանուկներ, որոնց ծնողները ճիշտ ուղու վրա դնելու անհրաժեշտություն կա: Ներկայից շնորհակալական խոսք ասաց Կապանի համայնքապետի տեղակալ Դավիթ Հայրապետյանը: Փառատոնին հնչեցին հայ, ռուս եւ արեւմտաեւրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Փառատոնի ավարտը

եզրափակեց Կապանի թիվ, թիվ 1,2,3 երաժշտական դպրոցների եւ Կապանի արվեստի մանկական դպրոցի սաներից բաղկացած միացյալ երգչախումբը, որ կատարեց Գեղունի Չթյանի «Հայաստան աշխարհ» երգը (խմբավար՝ Գայանե Հարությունյան): Փառատոնի ավարտին մշակութային կրթության աջակցության հիմնադրամի տնօրեն Նելլի Սարգսյանը, հիմնադրամի մեթոդիստ-խմբավար Արգենտինա Պողոսյանը, Քրիստինե Շերոյանը դիտորդություններ եւ նկատառումներ հայտնեցին երգչախմբերի վերաբերյալ, մատնանշեցին թերություններ, դրանց շտկման ուղիներ առաջարկեցին:

Վահրամ Օրբեյան

Սյունյաց Երկիր

<p>Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ</p> <p>Գլխավոր խմբագիր՝ ՍԱՍՎԵՆ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ</p>	<p>Հասցե՝ Գապան, Շահումյան 20/32: Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am</p> <p>Ռեզակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Լյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):</p> <p>Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:</p>	<p>Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:</p> <p>«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:</p>
--	---	--

Ճավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության
22.05.2019թ.: